

Բանալի բառեր՝ դեբիտորական պարտքեր, կրեդիտորական պարտքեր, ընթացիկ ակտիվներ, ընթացիկ պարտավորություններ, հաշվեկշիռի իրացվելիություն, ռիսկ:

ՀՏԴ 657

# ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության թեմա՝  
**Իրացվելիության վերլուծության և դրա ներքին վերահսկողության հիմնախնդիրները կազմակերպություններում (ՀՀ ակտիվային խմբի արտադրության օրինակով)**

**Անի ՄԻՐԶՈՅԱՆ**  
ՀՊՏՀ կառավարչական հաշվառում և աուդիտի ամբիոնի ասպիրանտ

Գիտական դեկավար՝  
**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Իրացվելիության համալիր կառավարման նպատակով գործնականում անհրաժեշտություն է առաջանում վերանայել ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը, որն անհրաժեշտաբար ներառում է նաև դեբիտորական պարտքերի ու կրեդիտորական պարտքերի կառուցվածքային տեղաշարժերը: Ուստի, հաշվի առնելով հիմնախնդրի կարևորությունը, **Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում՝ ելնելով** սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցից և իրացվելիության արդյունավետ վերահսկողության նպատակից, ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև նախընտրելի կառուցվածքի ձևավորման համար առաջարկում ենք հետևյալ մոտեցումը՝ ըստ ներկայացվող հաջորդական քայլերի:

1. որոշվում է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների տեսակարար կշիռները՝ կոնկրետ ժամանակային լագի համար,

2. կառուցվում է սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի կապի համատեքստում ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների ընտրված բաղադրիչների կիրառմամբ երկու ռեգրեսիոն հավասարումներ,

3. կառուցված ռեգրեսիոն հավասարումների կիրառմամբ որոշվում է իրացվելիության վերահսկողության տեսանկյունից ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների նախընտրելի կառուցվածքը,

4. ելնելով ստացված արդյունքներից՝ կոնկրետ կազմակերպության համար ներկայացվում են անհրաժեշտ լուծումներ:

**Առաջին քայլում** Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ի 2009-2016թթ. ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա նախ՝ կազմվել է թիվ 1 հավելվածում ներկայացված արյուսակը, այնուհետև դրա տվյալների հիման վրա ստորև բերված արյուսակ 1-ը:

**Երկրորդ քայլում կառուցել ենք երկու ռեգրեսիոն հավասարումներ:** Նախ՝ երկրորդ քայլի առաջին ենթաքայլում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի կապի համատեքստում, կառուցել ենք ընթացիկ ակտիվների ներկայացված բաղադրիչների նախընտրելի կշիռները որոշող ռեգրեսիոն հավասարումը, որի համար որպես արդյունքային ցուցանիշ՝ Y, ընտրվել է սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի տեսակարար կշիռը, իսկ փոփոխականներ՝ պաշարները (X<sub>1</sub>), առևտրային և այլ դեբիտորական պարտքերը (X<sub>2</sub>), դրամական միջոցները և դրանց համարժեքները (X<sub>3</sub>):

$$Y = -1,23 + 0,655 * X_1 + 0,577 * X_2 - 0,471 * X_3, (1):$$

Վերոնշյալ ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները ներկայացվել են թիվ 2 հավելվածում:

Երկրորդ քայլի երկրորդ ենթաքայլում կառուցել ենք սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի կապի համատեքստում ընթացիկ պարտավորությունների թիվ 1 արյուսակում ներկայացված բաղադրիչների նախընտրելի կշիռները որոշող ռեգրեսիոն հավասարումը, որի համար որպես արդյունքային ցուցանիշ՝ Y, ընտրվել է սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի տեսակարար կշիռը, իսկ փոփոխականներ՝ կարճաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները (H<sub>1</sub>), գնումների գծով կրեդիտորական պարտքերը (H<sub>2</sub>), այլ կրեդիտորական պարտքերը (H<sub>3</sub>):

$$Y = -0,228 + 0,539 * X_1 + 2,203 * X_2 - 0,228 * X_3, (2):$$

2-րդ ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները ներկայացվել են թիվ 3 հավելվածում:

**Երրորդ քայլում** 1-ին և 2-րդ ռեգրեսիոն հավասարումների կիրառմամբ՝ ստորև որոշել ենք 2009-2016թթ. համար իրացվելիության վերահսկողության տեսանկյունից ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների նախընտրելի կառուցվածքները՝ սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության նկատմամբ: Ստացված արդյունքները ներկայացրել ենք թիվ 2 արյուսակում:

Առաջարկվող մոտեցման շրջանակներում Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ի համար՝ ըստ միջին տվյալների, պաշարների գծով նախընտրելի է 36,08%-ը, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով՝ 11,95%-ը, դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով 0,89%-ը, կարճաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների գծով՝ 9,96%-ը, գնումների գծով կրեդիտորական պարտքերի գծով՝ 15,66%-ը, այլ կրեդիտորական պարտքերի գծով՝ 1,01%-ը: Սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի հետ կապի տեսանկյունից իրացվելիության մարտավարական

տարբերակները մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել հիմնական բաղադրիչների գծով աղյուսակ 3-ում հաշվարկված կշիռները:

Քանի որ իրացվելուության ներքին վերահսկողության գործընթացում ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների կառուցվածքն էական ազդեցություն է ունենում կազմակերպության փոխառու միջոցներ ներգրավելու և ծախս-ծավալ-շահույթ կապը արդյունավետ դարձնելու վրա, ուստի՝ կատարել ենք հետազոտվող կազմակերպության 2009-2016թթ. տվյալներով ՖԼԱ-ի (ֆինանսական լծակի արդյունավետության) և ԳԼՈ-ի (գործառնական լծակի ուժի) հաշվարկները ևս: Ստացված արդյունքները համապատասխանաբար ներկայացվել են թիվ 1 և 2 գծապատկերներում:

Ըստ ՖԼԱ-ի հաշվարկային արժեքների, Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում ակնհայտ է վարկային բեռի ծանրությունը: Հետազոտված բոլոր տարիներին այս կազմակերպությունում տնտեսական շահութաբերությունը չի կարողացել ծածկել ներգրավված վարկերի դիմաց վճարվող տոկոսադրույթը: 2009-2016թթ. ՖԼԱ-ն եղել է բացասական:

Ինչ վերաբերում է ԳԼՈ-ի դրսևորած վարքագծին, ապա այն բացասական արժեք է ընդունել 2010 և 2015թթ., որոնք ՀՀ տնտեսության համար եղել են դրամի արժեզրկմանը նախորդող հետճգնաժամային տարիներ: Ելնելով ՖԼԱ-ի և ԳԼՈ-ի փաստացի հաշվարկային արժեքներից և ներկայացված խնդիրներից, առաջարկվող մոտեցման եզրափակիչ քայլում, իրացվելուության համալիր միջոցառումների շրջանակներում, մեր կողմից կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

### Աղյուսակ 1.

**Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների տեսակարար կշիռները՝ սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի նկատմամբ, % 2009-2016թթ.**

Անվանումները	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Պաշարներ՝ X <sub>1</sub>	68,58	45,82	61,59	49,03	48,82	51,40	51,36	64,04
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր՝ X <sub>2</sub>	5,18	21,36	11,48	24,95	26,33	18,60	23,10	34,63
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ X <sub>3</sub>	4,04	4,18	1,20	0,75	1,52	0,28	0,21	1,33
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ՝ H <sub>1</sub>	14,46	23,73	8,05	7,76	9,17	9,56	6,59	68,44
Գնումների գծով կրեդիտորական պարտքեր՝ H <sub>2</sub>	3,17	4,15	4,62	4,78	2,45	5,18	6,03	26,48
Այլ կրեդիտորական պարտքեր՝ H <sub>3</sub>	4,47	0,67	0,14	0,05	0,00	0,08	0,00	5,08

### Աղյուսակ 2.

**Սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի կապի համատեքստում ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների առաջարկվող կառուցվածքային տարբերակները՝ 2009-2016թթ.**

Անվանումները	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	Միջինը
Պաշարներ՝ X <sub>1</sub>	44,9	30,0	40,3	32,1	32,0	33,7	33,6	41,9	36,08
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր՝ X <sub>2</sub>	3,0	12,3	6,6	14,4	15,2	10,7	13,3	20,0	11,95
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ X <sub>3</sub>	2,1	2,2	0,6	0,4	0,8	0,1	0,1	0,7	0,89
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ՝ H <sub>1</sub>	7,8	12,8	4,3	4,2	4,9	5,2	3,6	36,9	9,96
Գնումների գծով կրեդիտորական պարտքեր՝ H <sub>2</sub>	7,0	9,1	10,2	10,5	5,4	11,4	13,3	58,3	15,66
Այլ կրեդիտորական պարտքեր՝ H <sub>3</sub>	3,5	0,5	0,1	0,0	0,0	0,1	0,0	3,9	1,01

Երրորդ քայլում Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ի համար ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների ստացված կառուցվածքային տարբերակներին համապատասխան հաջորդ քայլում առաջարկել ենք սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի տեսակարար կշռի հաշվարկված տարբերակները՝ ըստ ընթացիկ ակտիվների և ըստ ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների նախընտրելի կառուցվածքների: Արդյունքները ներկայացվել են աղյուսակ 3-ում:


Ըստ ընթացիկ ակտիվների հիմնական բաղադրիչների առաջարկված կառուցվածքի՝ Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցը գտնվում է միջազգայնորեն նաև ընդունելի մակարդակի սահմաններում (50%): Ընթացիկ պարտավորությունների բաղադրիչների հաշվարկված կառուցվածքի տարբերակներին համապատասխան ռազմավարական տեսանկյունից սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի տեսակարար կշիռն իրացվելուության ռազմավարական տեսանկյունից համարվում է արդյունավետ, բացառությամբ 2016թ.:

Ներկայացվող մոտեցման եզրափակիչ փուլում, հիմք ընդունելով Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ի համար վեր հանված խնդիրները, ալկոհոլային խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների համար ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները:


- Ծգնաժամային իրավիճակներով պայմանավորված ալկոհոլային խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների համար հաշվեկշռի իրացվելուության մակարդակը նվազեցնող կարևոր գործոններից է ժամկետանց դեբիտորական պարտքը, ինչի արդյունքում հարկ է լինում լուծել ընթացիկ ֆինանսական պահանջը լրացուցիչ արդյունքներից ներգրավվող միջոցներով բավարարելու խնդիրը: Ժամկետանց չլինելու դեպքում դեբիտորական պարտքը կարող ենք

դիտարկել որպես ներդրման ձև՝ արդյունքում վճարումը հետաձգելու պայմանով հնարավոր է լինում ավելացնել ապրանքային իրացումը, ինչպես նաև կիրառել շրջանառու կապիտալի կառավարման արդյունավետ գործիք: Ուստի, ինչպես հետազոտված, այնպես էլ տվյալ ենթաճյուղի կազմակերպություններում անհրաժեշտ է կիրառել դեբիտորական պարտքի ներքին վերահսկողության համակարգ, ինչը հնարավոր կդարձնի պահպանել այն ցանկալի մեծության սահմաններում, գնահատել պարտքի ձևավորման ու վերադարձման փուլը, ապահովել կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության, վճարունակության և ամբողջական ֆինանսական վիճակի օպերատիվ դիտարկումներ, կազմել ըստ վճարունակության մշտական գործընկեր կազմակերպությունների և հավանական գնորդների տեղեկատվական կլաստերներ:

**ՖՃԱ-ի հաշվարկային արժեքները Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ի համար՝ 2009-2016թթ.** Գծապատկեր 1.



**ԳԼՈՒ-ի հաշվարկային արժեքները Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ի համար** Գծապատկեր 2.



**Աղյուսակ 3. Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի արժեքները տոկոսային արտահայտությամբ՝ ըստ ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների առաջարկվող կառուցվածքների (2009-2016թթ.)**

Տարի	Yx	YH
2009	46,0	13,8
2010	40,4	21,8
2011	46,4	14,5
2012	46,2	14,7
2013	46,5	10,3
2014	44,3	16,5
2015	46,9	16,8
2016	61,3	94,1

• Քանի որ դեբիտորական պարտքերի ձևավորումը որոշվում է մի շարք տարաբնույթ և արտաքին գործոններով, հետևաբար կազմակերպությունում իրացվելիության ներքին վերահսկողության համակարգի համար դրանք պետք է լինեն անհրաժեշտ մուտքային տվյալներ: Այնուամենայնիվ, արտադրող հայրենական կազմակերպությունների համար արտաքին գործոններից կարևորել ենք տնտեսության վիճակը, մասնավորապես.

- ✓ արտադրության տնտեսական ակտիվության նվազմամբ պայմանավորված դեբիտորական պարտքերի աճը, այդ թվում նաև ժամկետանցի գծով,
- ✓ հաշվարկների ընդհանուր վիճակը՝ արդյունքում չվճարումները հանգեցնում են դեբիտորական պարտքերի աճի,
- ✓ 33 ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային բաղաբաղանջության արդյունավետությունը, երբ սահմանափակվում է Եմիսիան, ապա առաջանում է դրամի նկատմամբ զգալի պահանջ,
- ✓ արժեզրկման մակարդակը, որի բարձր լինելու դեպքում նպատակահարմար է դառնում ուշացնել պարտքի վճարումը, բանի որ որքան հետաձգվում է վճարումը, այնքան նվազում են իրական ծախսերը,

- ✓ երկրում արտագաղթով պայմանավորված ներքին շուկայի ծավալների կրճատումը, արդյունքում ամբողջական պահանջարկի նվազումը պարտադրում է ապրանքային վարկով ապրանքների իրացում, որն էլ իր հերթին դառնում է դեբիտորական պարտքի ավելացման պատճառ: Ներքին գործոններն ուղղակիորեն կապված են կազմակերպության կողմից ընտրված ռազմավարության, առևտրային վարկով իրացման քաղաքականության, գործընկեր կազմակերպությունների վարկունակության և վճարունակության որոշման օբյեկտիվ չափանիշների, խելամիտ գեղջային համակարգի կիրառման հետ:
  - Դեբիտորական պարտքի քանակական մեծությունը կապված է ապրանքների իրացման և փաստացի շահույթի ստացման միջև ժամանակի միջին մեծության հետ: Իրականացնելով վաճառքի խթանման քաղաքականություն՝ յուրաքանչյուր արտադրական կազմակերպություն պետք է կատարի ֆինանսական լծակի և գործառնական լծակի ուժի ազդեցությունը, այնքան բարձր է ներդրումների նետո (մաքուր) արդյունքի զգայունությունն իրացման ծավալի փոփոխությանը, և որքան բարձր է ֆինանսական լծակի ադրյունավետությունը, այնքան զգայուն է կազմակերպության զուտ շահույթը ներդրումների նետո արդյունքին: Նկատի ունենալով նշված հանգամանքը, մեր կարծիքով, գործնականում իրացվելիության արդյունավետ վերահսկողության տեսանկյունից ևս անհրաժեշտ է ընտրել հետևյալ տարբերակներից մեկը.
    - ✓ ֆինանսական լծակի ուժի ցածր և գործառնական լծակի ուժի բարձր մակարդակ,
    - ✓ գործառնական լծակի ուժի ցածր և ֆինանսական լծակի ուժի բարձր մակարդակ,
    - ✓ գործառնական լծակի ուժի և ֆինանսական լծակի ուժի չափավոր մակարդակ:
  - Կազմակերպության դեբիտորական պարտքի օպտիմալ մեծության որոշման համար առաջարկում ենք հետևյալը.
    - ✓ Դասակարգել դեբիտորական պարտքը՝ կախված իր մեծությունից: Այս դեպքում հնարավոր կլինի բացահայտել այն դեբիտոր կազմակերպություններին, որոնց պարտքի վերադարձման հետ հաշվետու փուլում առաջանում են որոշակի բարդություններ:
      - ✓ Գործընկեր գնորդ կազմակերպություններին դասակարգել՝ ըստ վարկային ռեյտինգի, կիրառելով դրանց համար առևտրային վարկի սահմանաչափեր, լիմիտներ, ինչը հնարավորություն կընձեռի փոխկապակցված վերահսկել վճարունակությունն ու հաշվեկշռի իրացվելիությունը:
        - Դրամական հոսքերի օպտիմալացման նպատակով անհրաժեշտ է վերլուծել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շրջանառելիության ցուցանիշները: Տվյալ դեպքում որոշվում է պարտքի շրջանառելիության արագությունը և ժամանակը, բացահայտվում են դրա արագացման ռեզերվները կազմակերպության տնտեսական գործունեության տարբեր փուլերում: Իրացվելիության արդյունավետ վերահսկողության ապահովման համար դեբիտորական պարտքի ինկասացիան՝ ըստ ժամկետների և գումարների, պետք է համադրել լինի կրեդիտորական պարտքի պլանավորված մարման հետ, ընդ որում՝ դեբիտորական և կրեդիտորական պարտքի շրջանառելիությունը պետք է լինի համեմատելի:
        - Դեբիտորական պարտքի վերլուծության հիման վրա վճարունակության և իրացվելիության փոխկապակցված վերահսկողության համար նպատակահարմար է կազմել դեբիտորների բարտեզ՝ ըստ պարտքի առաջացման ժամկետի, մարման ժամկետայնության, հետաձգվածի և կետանցի գծով:
        - Բանկային համակարգում ֆակտորինգի լայնամասշտաբ կիրառման պայմաններում արդյունավետ է նաև դեբիտորական պարտքերի շրջանառելիության աագացման նպատակով ֆակտորինգի կիրառումը, ինչը հնարավորություն է ընձեռում հնարավորինս նվազեցնել մատակարար կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության ռիսկը և բարձրացնել վճարունակությունը:

Ներկայացվել է 13.07.2017թ.  
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.

### Չավելված 1.

Աղյուսակ 1.1.

Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների մնացորդները, հազ. դրամ, 2009-2016թթ.

Տարի	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Պաշարներ՝ X <sub>1</sub>	1328 040	1103866	1202171	1106659	1155349	1298462	1177199	1134197
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր՝ X <sub>2</sub>	100377	514638	224131	563265	623188	469935	529362	613436
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ X <sub>3</sub>	78 146	100813	23326	16995	35916	7098	4852	23557
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ՝ H <sub>1</sub>	280000	571730	314344	350157	434229	483118	302001	308462
Գնումների գծով կրեդիտորական պարտքեր՝ H <sub>2</sub>	61 296	100054	180323	215652	116033	261876	276642	119349
Այլ կրեդիտորական պարտքեր՝ H <sub>3</sub>	86515	16 060	5 492	2 446	0	3 882	0	22 883

Չավելված 2.

Աղյուսակ 2.1.

Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի և ընթացիկ ակտիվների հիմնական բաղադրիչների նախընտրելի կառուցվածքը որոշող ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները 2009-2016թթ.

Ռեգրեսիոն վիճակագրություն					
Բազմակի R	0,840591				
R բառակուսի	0,706593				
Կարգավորված R բառակուսի	0,315383				
Ստանդարտ շեղում	4,66531				
Դիտարկումներ	8				
Վարիացիայի և կովարիացիայի վերլուծություն					
	<i>Df</i>	<i>SS</i>		<i>MS</i>	
Ռեգրեսիա	4	157,2464		39,3116	
Մնացորդային արժեքներ	3	65,29535		21,76512	
Ընդամենը	7	222,5418			
Չաստատուն փոփոխական	Գործակիցների կշռային ազդեցությունները	t վիճակագիր	P – նշանակությունը	Ստորին 95%	Վերին 95%
<b>Ազատ անդամ</b>	-1,230	2,016	-0,610	0,585	-7,644
<b>X<sub>1</sub></b>	0,655	0,272	2,407	0,095	-0,211
<b>X<sub>2</sub></b>	0,577	0,411	1,401	0,256	-0,733
<b>X<sub>3</sub></b>	-0,471	2,138	-0,220	0,840	-7,274

Չավելված 3.

Աղյուսակ 3.1.

Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների նախընտրելի կառուցվածքը որոշող ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները 2009-2016թթ.

Ռեգրեսիոն վիճակագրություն					
Բազմակի R	0,746786				
R բառակուսի	0,557689				
Կարգավորված R բառակուսի	0,225956				
Ստանդարտ շեղում	4,960662				
Դիտարկումներ	8				
Վարիացիայի և կովարիացիայի վերլուծություն					
	<i>Df</i>	<i>SS</i>		<i>MS</i>	
Ռեգրեսիա	3	124,1091		41,3697	
Մնացորդային արժեքներ	4	98,43265		24,60816	
Ընդամենը	7	222,5418			
Չաստատուն փոփոխական	Գործակիցների կշռային ազդեցությունները	t վիճակագիր	P – նշանակությունը	Ստորին 95%	Վերին 95%
<b>Ազատ անդամ</b>	-0,228	0,313	-0,729	0,506	-1,096
<b>H<sub>1</sub></b>	0,539	0,727	0,742	0,499	-1,478
<b>H<sub>2</sub></b>	2,203	1,349	1,633	0,178	-1,542
<b>H<sub>3</sub></b>	-0,228	0,313	-0,729	0,506	-1,096

Ներկայացվել է 13.07.2017թ.  
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.